Закрытое акционерное общество
«Газпром Армения»
(ЗАО «Газпром Армения»)

Учреждение «Учебно-спортивный комплекс»

«Գազպրոմ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկ

ПРИКАЗ
ՀՐԱՄԱՆ

«18» ապրիլի 2023թ. № 254-Լ

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ (ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ) ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 411-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Գլխավոր տնօրենի տեղակալի 2023 թվականի հունվարի 25-ի N Ն/23.2/2559-2023, 2023 թվականի փետրվարի 02-ի N Ն/23.2/3509-2023 և 2023 թվականի մարտի 23-ի N Ն/23.2/8652-2023 գրություններն ու ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով և 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 2019 թվականի հունիսի 14-ի N 59 հրամանի 8-րդ կետի 3-րդ ենթակետով և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի կանոնադրության 44-րդ կետի 5-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում կնքվող պայմանագրերով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) կողմից մատուցվող՝

1) նախադպրոցական ծառայությունների վճարների (վարձավճարների) դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) կրթական ծառայությունների վճարների (վարձավճարների) դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի 2020 թվականի օգոստոսի 24-ի ««Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի կողմից մատուցվող ծառայությունների վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» N 411-Ա հրամանի N

N 3 և 4 հավելվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն N N 3 և 4 հավելվածների:

3. Հիմնարկի գլխավոր հաշվապահ Ա.Մոմճյանին, դպրոցի ուսումնական աշխատանքների պատասխանատուներ Ա.Մխիթարյանին, Լ.Գալստյանին և Է.Սանթրոսյանին, դպրոցի լրացուցիչ կրթության պատասխանատու Թ.Բաղդասարյանին և սահադաշտի գլխավոր ադմինիստրատոր Մ.Մանգասարովային՝ ապահովել սույն հրամանի կատարման կազմակերպումը:

4 . Հիմնարկի տնօրենի՝ ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ Ե. Ամիրխանյանին, վարչական և տնտեսական հարցերով տեղակալ Զ.Առաքելյանին՝ ապահովել սույն հրամանի նկատմամբ հսկողությունը:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ հրամանի 1-ին կետի:

6. Սույն հրամանի 1-ին կետն ուժի մեջ է մտնում 2023 թվականի սեպտեմբերի 1-ից և տարածվում է 2023 թվականի փետրվարի 19-ից հետո կնքված նախադպրոցական և կրթական ծառայությունների մատուցման այն պայմանագրերով ծագած հարաբերությունների նկատմամբ, որոնցով ծառայությունները ենթակա են մատուցման 2023 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՏՆՕՐԵՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«ԱՍՊՏ» ՀԻՄՆԱՐԿ «УСК» УЧРЕЖДЕНИЕ «ESC» ENTERPRISE 00046317

Հավելված N 1
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2023 թվականի ապրիլի 18-ի N 254-Ա հրամանի

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ (ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ)

1. Մանկապարտեզում նախադպրոցական ծառայությունների մատուցում՝ ժամը 8.30-ից մինչև 18.30-ն, շաբաթական 5 օրվա (երկուշաբթի-ուրբաթ) ընթացքում, ամսական՝

1) 180,000 (մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, եթե երեխան (սանը) մանկապարտեզ ընդունվել է (նախադպրոցական ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվել է) 2023-2024 ուսումնական տարվա (2023 թվականի սեպտեմբերի 1-ից 2024 թվականի օգոստոսի 31-ը) ընթացքում,

2) 170,000 (մեկ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ, եթե երեխան Մանկապարտեզ ընդունվել է (նախադպրոցական ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվել է) մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը:

2. Մանկապարտեզում նախադպրոցական ծառայությունների մատուցում ժամը 8.30-ից մինչև 13.30-ն, շաբաթական 5 օրվա (երկուշաբթի-ուրբաթ) ընթացքում, ամսական՝ 120,000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, եթե երեխան (սանը) Մանկապարտեզ ընդունվել է (նախադպրոցական ծառայությունների մատուցման մասին պայմանագիրը կնքվել է) 2023-2024 ուսումնական տարվա (2023 թվականի սեպտեմբերի 1-ից 2024 թվականի օգոստոսի 31-ը) ընթացքում:

3. Մեկ ընտանիքից մանկապարտեզ կամ դպրոց հաճախող երկրորդ երեխայի համար կիրառվում է զեղչ՝ սույն հավելվածի 1-ին կետով սահմանված մեկ ամսվա վճարների դրույքաչափերի նկատմամբ՝ 10 (տասը) տոկոսի չափով: Երկրորդ երեխայից (սանից) հետո յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար կիրառվում է նախորդից ավել ևս 10 (տասը) տոկոսի չափով զեղչ:

4. Սույն հավելվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված նախադպրոցական ծառայությունների վճարները (վարձավճարները) նախադպրոցական ծառայությունների մատուցման պայմանագրի գործողության ընթացքում (մինչև մանկապարտեզի ավագ խմբում երեխայի ուսուցման և զարգացման կազմակերպման ավարտը) ենթակա չեն փոփոխման:

Հավելված N 2
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2023 թվականի ապրիլի 18-ի N 254-Ա հրամանի

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ (ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ)

1. 2,070,000 (երկու միլիոն յոթանասուն հազար) ՀՀ դրամ՝ մեկ ուսումնական տարվա համար, եթե երեխան (սովորողը) դպրոց ընդունվել է (կրթական ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվել է) 2023-2024 ուսումնական տարվա (2023 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև տվյալ ուսումնական տարվա ավարտը) ընթացքում՝ բացառությամբ սույն հավելվածի 2-րդ կետում նշված դեպքերի:
2. 1,980,000 (մեկ միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ մեկ ուսումնական տարվա համար, եթե 2019-2020 ուսումնական տարում դպրոցի 1-ին դասարան ընդունված և մինչև 4-րդ դասարանը ներառյալ տարրական դպրոցում անընդմեջ ուսումնառություն ստացած երեխան (սովորողը) սահմանված կարգով և կրթական ծառայությունների մատուցման մասին մինչև 2023 թվականի սեպտեմբերի 1-ը կնքված պայմանագրին համապատասխան տեղափոխվել է դպրոցի 5-րդ դասարան (հիմնական (միջին) դպրոց):
3. Կրթական ծառայությունները Հիմնարկի տնօրենի հրամանով հեռավար (դիստանցիոն) եղանակով մատուցելիս՝ կրթական ծառայությունների մատուցման վերաբերյալ կնքված պայմանագրի գնի նկատմամբ կիրառվում է 20 (քսան) տոկոս զեղչ:
4. Մեկ ընտանիքից դպրոց կամ մանկապարտեզ հաճախող երկրորդ երեխայի համար կիրառվում է զեղչ՝ մեկ ուսումնական տարվա վճարի դրույքաչափի նկատմամբ 10 (տասը) տոկոսի չափով: Երկրորդ երեխայից հետո յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար կիրառվում է նախորդից ավել ևս 10 (տասը) տոկոսի չափով զեղչ:
5. Սույն հավելվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված կրթական ծառայությունների վճարների դրույքաչափերը գործում են սովորողի կողմից անընդմեջ (առանց կրթական ծառայությունների մատուցման մասին պայմանագրի ընդհատման), ըստ դպրոցի համապատասխան կրթական աստիճանի՝ տարրական դպրոցում (1-4-րդ դասարաններ), միջին (հիմնական) դպրոցում (5-9-րդ դասարաններ) կամ ավագ դպրոցում (10-12-րդ դասարաններ), ուսումնառության ավարտը և այդ ընթացքում ենթակա չեն փոփոխման:

Հավելված N 3
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2023 թվականի ապրիլի 18-ի N 254-Ա հրամանի

Հավելված N 3
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2020 թվականի օգոստոսի 24-ի N 411-Ա հրամանի

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հիմնարկում ամառային դպրոցի («Ամառային կրթական հավաք») կազմակերպում՝ 3 մակարդակներով, սկսնակ, միջին և լավ իմացությամբ, հայագիտական, ռուսական և անգլիական ուղղություններով, 3 շաբաթ կամ 15 աշխատանքային օր տևողությամբ, յուրաքանչյուր ուղղության մեկ մակարդակի կրթական ծրագրի վճարը՝ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Դպրոցի սովորողների և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աշխատողների, այդ թվում՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ մասնաճյուղերի աշխատողների երեխաների համար սույն հավելվածի 1-ին կետով նախատեսված ծառայությունների համար կիրառվում է 10 (տասը) տոկոս զեղչ:

3. Հիմնարկի աշխատողների երեխաների համար սույն հավելվածի 1-ին կետով նախատեսված ծառայությունների համար կիրառվում է 50 (հիսուն) տոկոս զեղչ:

4. Մեկ ընտանիքից Հիմնարկի ամառային դպրոց հաճախող երկրորդ երեխայի համար կիրառվում է զեղչ՝ սույն հավելվածի 1-ին կետով նախատեսված վճարի դրույքաչափի նկատմամբ 10 (տասը) տոկոսի չափով: Երկրորդ երեխայից հետո յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար կիրառվում է նախորդից ավել ևս 10 (տասը) տոկոսի չափով զեղչ:

Հավելված N 4
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2023 թվականի ապրիլի 18-ի N 254-Ա հրամանի

Հավելված N 4
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2020 թվականի օգոստոսի 24-ի N 411-Ա հրամանի

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Մարզասարքերի դահլիճում մարզվելու համար (յուրաքանչյուր անձը)՝

1) մեկանգամյա այցելություն՝ 2000 (երկու հազար) ՀՀ դրամ.

2) մեկանգամյա այցելություն (մարզումը մարզիչի հետ)՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ.

3) 5 շաբաթվա ընթացքում 8 այցելություն՝ 12000 (տասներկու հազար) ՀՀ դրամ.

4) 5 շաբաթվա ընթացքում 8 այցելություն (մարզումը մարզիչի հետ)՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ.

5) 5 շաբաթվա ընթացքում 12 այցելություն՝ 18000 (տասնութ հազար) ՀՀ դրամ.

6) 5 շաբաթվա ընթացքում 12 այցելություն (մարզումը մարզիչի հետ)՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ.

7) 1 ամսվա ընթացքում անսահմանափակ այցելություն՝ 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ.

8) 1 ամսվա ընթացքում անսահմանափակ այցելություն (մարզումը մարզիչի հետ)՝ 45000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամ:

2. Խաղային ձևերի համար նախատեսված մեծ մարզադահլիճից օգտվելու համար (յուրաքանչյուր ժամը)՝

1) մեկանգամյա այցելություն՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ.

2) նվազագույնը 24 այցելություն՝ 27000 (քսանյոթ հազար) ՀՀ դրամ:

3. Խաղային ձևերի համար նախատեսված փոքր մարզադահլիճից օգտվելու համար (յուրաքանչյուր ժամը)՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ:

4. 3-ից մինչև 5 տարեկանը ներառյալ երեխաների համար նախատեսված լողավազանում մարզչի հետ մարզվելու համար 30 րոպե տևողությամբ մարզումներ (յուրաքանչյուր անձը)՝

1) 5 շաբաթվա ընթացքում 8 այցելություն՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ.

2) 5 շաբաթվա ընթացքում 12 այցելություն՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ:

5. 6-ից մինչև 16 տարեկանը ներառյալ երեխաների համար նախատեսված լողավազանում մարզչի հետ մարզվելու համար 45 րոպե տևողությամբ մարզումներ (յուրաքանչյուր անձը)՝

1) 5 շաբաթվա ընթացքում 8 այցելություն՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ:

2) 5 շաբաթվա ընթացքում 12 այցելություն՝ 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ:

6. Փակ սահադաշտում մարզվելու (գեղասահք) համար (յուրաքանչյուր անձը)՝

1) մեկանգամյա այցելություն (մարզումը անհատական մարզիչի հետ), 45 րոպե տևողությամբ մարզում սահադաշտում, ներառյալ չմուշկների տրամադրումը՝ 10000 (տասը հազար) ՀՀ դրամ,

2) 1 ամսվա ընթացքում 10 այցելություն (մարզումը անհատական մարզիչի հետ), 45 րոպե տևողությամբ մարզում սահադաշտում, ներառյալ չմուշկների տրամադրման՝ 80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ,

3) մասսայական սահք, ներառյալ չմուշկների տրամադրումը, (յուրաքանչյուր ժամը)՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.

4) չմուշկներով սահելու համար հենակների տրամադրում՝ (յուրաքանչյուր ժամը) 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ:

7. Փակ սահադաշտում միջոցառումների, այդ թվում՝ սպորտային, մարզական կամ կորպորատիվ, անցկացման համար (մեկ օրվա ընթացքում, յուրաքանչյուր ժամը)՝

1) 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ առանց համապատասխան լուսային և ձայնային ապահովման, ընդ որում՝

2) համապատասխան ձայնային ապահովման դեպքում՝

ա) լրացուցիչ 10000 (տասը հազար) ՀՀ դրամ՝ 1 բարձրախոսով, բայց ոչ ավել քան 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ,

բ) լրացուցիչ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ՝ 2 բարձրախոսով, բայց ոչ ավել քան 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ,

գ) լրացուցիչ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ՝ 3 բարձրախոսով, բայց ոչ ավել քան 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ,

դ) լրացուցիչ 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ՝ 4-6 բարձրախոսով, բայց ոչ ավել քան 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ,

3) համապատասխան լուսային ապահովման դեպքում (լուսային էֆեկտներ)՝

ա) լրացուցիչ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, բայց ոչ ավել, քան 150,000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

8. Սույն հավելվածում նշված ծառայությունների համար գործում են հետևյալ զեղչերը.

1) Հիմնարկի դպրոցի սովորողների և մանկապարտեզի սաների համար՝ 10 (տասը) տոկոս զեղչ՝ բոլոր ծառայությունների մասով, բացառությամբ սույն հավելվածի 2-րդ, 3-րդ կետերով և 6-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված ծառայությունների,

2) Հիմնարկի դպրոցի սովորողների և մանկապարտեզի սաների ծնողների համար՝ 10 (տասը) տոկոս զեղչ՝ սույն հավելվածի 1-ին կետով նախատեսված ծառայությունների մասով,

3) մեկ ընտանիքից երկու կամ ավելի անդամների համար՝ ծառայություններից օգտնվող ընտանիքի երկրորդ անդամի համար՝ 10 (տասը) տոկոս, իսկ ընտանիքի երկրորդ անդամից հետո յուրաքանչյուր հաջորդ անդամի համար՝ նախորդից ավել ևս 10 (տասը) տոկոս զեղչ՝ բոլոր ծառայությունների մասով, բացառությամբ սույն հավելվածի 2-րդ, 3-րդ կետերով և 6-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված ծառայությունների,

4) մեկ անձի կողմից երկու կամ ավել ծառայություններից օգտվելու դեպքում յուրաքանչյուր հաջորդ ծառայության համար՝ 10 (տասը) տոկոս՝ բոլոր ծառայությունների մասով, բացառությամբ սույն հավելվածի 2-րդ, 3-րդ կետերով և 6-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված ծառայությունների:

9. Կորպորատիվ հաճախորդների փաստացի շահառուներին (այդ թվում՝ կազմակերպության աշխատողներին և (կամ) նրանց ընտանիքի անդամներին), որպես խրախուսում՝ տրամադրվում է 10 (տասը) տոկոս զեղչ այն դեպքում, երբ փաստացի շահառուների թիվը կազմում է 10-ից ավել, բացառությամբ սույն հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված ծառայությունների: